ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

28.11.2025թ. կնքված թիվ «ԵՔԼ-ԳՀԾՁԲ-26/4» գնման պայմանագրի

ք. Երևան «03» «փետրվարի» 2026թ.

**Երևան համայնքի <<Երքաղլույս>> ՓԲԸ-ն**, ի դեմս տնօրենի ժ/պ **Հ. Մուրադյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<Տելեկոմ Արմենիա>> ԲԲԸ-ն**, ի դեմս գլխավոր տնօրեն **Հ. Եսայանի**, որի անունից հանդես է գալիս Ընկերության ներկայացուցիչ **Կարեն Ասատուրյանը** (լիազորագիր՝ տրված Հ. Եսայանի կողմից 13.08.2025թ-ին), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև Կողմեր, հիմք ընդունելով 28.11.2025թ. կնքված թիվ «**ԵՔԼ-ԳՀԾՁԲ-25/4**» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.14 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. *Համաձայնագրի առարկան*

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել **4.000.000 (չորս միլիոն)** ՀՀ դրամ՝ ի գիտություն ընդունելով նաև Պայմանագրի 7.1.1 կետը:

1.2 **Պայմանագրով նախատեսված չափաբաժինը և դրանով սահմանված քանակները և ծավալները Պատվիրատուն կարող է ամբողջությամբ չպատվիրել գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով և այդ չպատվիրված մասով պայմանագիրը համարվելու է Կողմերի համար լուծված՝ պայմանագրի գործողության ժամկետի ավարտով, բայց ոչ ուշ, քան 2027 թ.-ի հունվարի 31-ը:**

1.3 Սույն Համաձայնագրով և Պայմանագրով նախատեսված կարգով հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն Հավելված N 2-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Սույն Համաձայնագրի պայմանները կիրառվում են 2026 թվականի հունվարի 01-ից կողմերի միջև ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը և հավելվածը կազմված է 2 էջից, կնքվում են երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ՝ յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական բնօրինակ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| «Երքաղլույս» ՓԲԸ | <<Տելեկոմ Արմենիա>> ԲԲԸ |
| ք. Երևան, Բուզանդի 1/4, Կոմիտաս 28 | ք. Երևան, Ազատության 24/1 |
| ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ | Հայէկոնոմբանկ ԲԲԸ |
| Հ/Հ 1510004597930100 | Հ/Հ 163004038861, |
| ՀՎՀՀ 02504913 | ՀՎՀՀ 02500052 |
| էլ.փոստ. yerqaxluys@yerevan.am, | էլ.փոստ. corp_tender@telecomarmenia.am |
| Հ. Մուրադյան | Կ. Ասատուրյան |
| ստորագրություն | ստորագրություն |
| ԿՏ | ԿՏ |

Հավելված N 2
« 28 » Նոյեմբերի 2025 թ. կնքված
«ԵՔԼ-ԳՀԾՁԲ-26/4» ծածկագրով պայմանագրի
Հաստատված՝
§ 03 ¦ § հունվարի ¦ 2026Ã. կնքված համաձայնագիր N 1-ով

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | |
|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ | |
| 1 | 64211100 | Հանրային հեռախոսային ծառայություններ | Վճարումն իրականացվում է ծառայությունը Պատվիրատուի կողմից ընդունվելու պահից՝ 5(հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: | **4000000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**«Երքաղլույս» ՓԲԸ**
ք. Երևան, Բուզանդի 1/4, Կոմիտաս 28
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 1510004597930100
ՀՎՀՀ 02504913
Էլ.փոստ. yerqaxluys@yerevan.am,

Հ. Միրզոյան
ստորագրություն
ԿՏ

**ԿԱՏԱՐՈՂ**
**<<Տելեկոմ Արմենիա>> ԲԲԸ**
ք. Երևան, Ազատության 24/1
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163004038861,
ՀՎՀՀ 02500052
Էլ.փոստ. corp_tender@telecomarmenia.am

Կ. Ասատուրյան
ստորագրություն
ԿՏ